ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, Սեպտեմբերի 26-ին. Թիֆլիս. №39.




«Հիլմի փաշան յայտնեց ի լուր աշխարհի և Ազգային Պատրիարքարանի, որ Ադանայի դէպքերի առթիւ, հայերը մեղաւոր չեն եղել և նրանք ամենաբարեկամ և հաւատարիմներն են Օսմանեան պետութեան»։ ՀԵՌԱԳԻՐ

Ադանայում հայերը կախաղան են հանւում, թէև յայտարարւած է, որ նրանք անմեղ են։




ԱԶԳԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՁԻՐՔԵՐԸ
ՈՎ ԻՆՉ Է ՏԱԼԻՍ.

ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1909 թ.

Տարի 4 ԽԱԹԱԲԱԼԱ 4 Տարի

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան բոլոր հայ և օտարազգի գործիչների, որոնք արժանի են ծաղրանկարուելու, քննադատուելու, ծաղրի և ծիծաղի։

«Խաթաբալայի» բաժանորդները, այլև երդուեալ ընթերցողները ԱՊԱՀՈՎԱԳՐՒԱԾ ԵՆ ամեն տեսակ պատուհասներից և խայտառակութիւններից

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, եւ գտնւում է Մօսկովսկայա փ. № 19

Յայտարարութիւններ ամեն լեզուներով և խիստ մատչելի գներով։ Մահացուցակները մուքթա։

Մեր ընթերցողներին մաս ենք ածում սեփական աէրօպլաններով։

Բազմաչխատ գործակալներին և «Խաթաբալայի» պրօպագանդիստ տարածողներին «Խաթաբալան» ուղարկում ենք ձրի։

Խմբագրին կարող է տեսնել ով որ ուզը ունի և քեռ չէ՝ տանը բնած ժամանակ, խմբագրատանը անժամանակ և փողոցներում բոլոր ժամանակ։ Առանձին ընդունելութիւններ չի ունենում, իսկ գաղանի խոր ունեցողներից խուսափում է։ Նիւթեր, յօդուածներ, ոտանաւորներ, յայտարարութիւններ և այլն մենք էլ ենք ընդունում, փոստով էլ, միայն ճանապարհածախսը ձերն է, առանց մարկայի նամակներ „սկզբունքով" չենք ընդունում։ Յօդուածների համար վճարում ենք, եթէ արժան ենք համարում, իսկ անարժանների համար փող էլ որ տան, չենք տպիլ։



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

Տարեկան Թիֆլիզում 4 ր. դուրսը 5 ր.
Կէս տարուանը . . . . 2 ր. . . . 3 ր.
Երեք ամսուանը . . . 1 ր. 50 կ.
Ամիսը . . . . . . . . . . . 50 կ,

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала".
Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Re'daction „Khathabala".
Խմբ. հրատարակող՝ ԱՍՏ. ՆՐԻՑԵԱՆ

**Հոկտեմբերի 1-ից մինչև տարւայ վերջը «Խաթաբալան» արժէ 1 րուբլի 50 կոպէկ։**

## Ա Զ Դ

Մեր զաւառական բաժանորդներից շատերը ուղարկել են մեզ 4-ական րուբլի բաժանորդագին, փոխանակ 5 րուբլու։

Ներկայիս կրկին խնդրում ենք նրանցից, որոնք մնացած 1-ական րուբլին դեռեւս չեն հասցրել՝ ուղարկեն այժմ դրամով կամ պօստային մարկաներով—որպէսզի առաջիկայ նոյեմբերից թերթի առաքումը չը դադարեցնենք։

Գաւառական քաղաքներում, աւաններում և ընթերցասէր գիւղերում, հարկաւոր են լրագրավաճառ գործակալներ, որոնք յանձն առնեն «ԽԱԹԱԲԱԼԱՆ» տարածել, իրենց շրջաններում»։

Պայմանների մասին դիմել Թիֆլիզ, խմբագրութիւն «Խաթաբալայի»։

## ԷՉՄԻԱԾԻՆ

Հօրէս էրկու շաբաթ է, ինչ վուր իս՝ քաղկեմէն դուս իմ գնացի. էրեգյիդ էկայ միր պեռլած Թիփլիզը ու տեհայ, թէ վունց ամենբան շիլափլաւ է դառի, գնալու օրեմէս դէսը հինգ-վից ջէր մինձ անձրիւ է էկի, խալխին զարզը շատ է ուփի։

Էտենց կուլի բաս ինչ, իփ վուր տէրը գուրձի վրայ չէ՝ մէ գլուխ անդէրութին է ըլում, ու չունքի Էջմիածնումն էլ իրա օրինաւուր Տէրը ջէր գուրձի չէր կպի, էտու համա էլ ու ասկի խաթրու, գուրձիրս անգլուխ թողի ու գնացի Էջմիածին, վուր օղորմած ըլի ձիգ ու ձիր մեռելներուն, ու Կաթողիկուսի օխնանքին մէ լաւ քէփ քաշեցի. ասկի համա Էլ, հաջի Ամբարցում Աոաքելովի հիդ խելիմ փիքր արի ու իրա օղորմութենով, էսօր էլի էսաի իմ։

Աստուծ կինք տայ միր Աստծուն, վուր միզ Էջմիածին բախշից։

Վուր ձիզ արդա ասիմ էն, ինչ վուր տեհիլ իմ. կու արմնաք, թէ իս ինչ գողրմ ունիմ, վուր էտ անտիկա բաները տեհայ, ու էլի յիդ՝ էսաի էկայ։

Վուր արդա ասիմ աղեքիս բազնիմաղնի ու չէշիդ-մէշիդ անդազէքը, հենց կու գիդենաք թէ Պարիժեմէն նուր իմ էկի։

Ուսողը գիդի, չուսողի ինչ բանն է էն բանի վրէն խօսիլը. վուր իսկի համն էլ չէ տեհի։

Մասուս սարը տեհիլ իք, միր Մախաթի գօրէն վունչինչ է դրա հիդ բաբերած, գլուխն էլ հեսափ բանցրն է, հեսափ բանցրը, հեսափ սիպտակ ու ձնոտ, կօսիս միր սիրելի Ադայով Ղազարուսը ըլի, թազա մօղնի վարժապիտների մէչտիղը կաղնած։

Ջինը ինչդդամ գուգիք՝ ամառ. ձմիռ կայ ու կայ, վուր մէ մաշինա շինինք ու էնդանց ամառւայ շուքերին թազա թազա ձին բերինք էսաի, լաւ դաղում կուննենանք, էլի վուր չլի, օրեկան մէ էրկու շայի փուղ կու դաղինք։

Թէկլի գիդց ու հաղողը կու բերինք, ձինը պակաս Է՞։

Էս բանի համա իս խնթրում իմ, վուր փիքր անին ինջինէր Կիրակուզովը, մինջինէր Մալխասովը, ջինջինէր Խատիսովը ու էն մէկէլ փուղատուր բաքուէցիքը, վուր փուղ ունին ու խիլք չունին, ու հենց գիդին թէ՝ վուր փուղ ունին, խիլք էլ կունենան. փիլիսօփէքը կի ասում ին, վուր ով փուղ ունէ, կօսէ, նա խիլք չունէ, կօսէ։ Էս խիստ դուրթ ին ասի. իս, էն չախը, իփ վուր փուղ իմ ունենում, խիլք չիմ ունենում, փուղը ամեն մի ուգողին տալիս իմ, մնում իմ խանդլխխան անփուղ—անգրուշ. իժում ջըբումս իփ վուր տեհնում իմ, վուր մկնիրը ջիրիթ ին անում, վունց վուր Էջմիածնի կասումը, նուր իմ վռայ տալի, թէ էս ինչ ճլին է էկի գլուխս, վուր անփուղ իմ մնացի։

Խանդլխխան անփուղ մնալն էլ լաւ

է, մարթա խիլքի՛ է գալի։

Ու, խանդխախան էլ մինձ խիլքը խիստ գարար է տալի. խիլքը վուր հաւաքւում է գոգրումը, ուզում է վուր մէ տիզեմէն դուս թռչի, ու չունքի չէ կանում մէ բաշ գոգրեմէն դուս գայ, կամանց կամանց զուզը խառնւում է, իժում էլ աջաբսանդալի հանգը բան է դառնում ու իժում էլ վունց վուր կտրած կաթը, ան օխչրի թթւած խաշը, հեստի մուռտառ բան է դառնում, ձիր արիւը, վուր միր ասկի փողրաչի գուրձիչներից ու փրզիչներիցն էլ էն կուռն է անցնում։

Մաշ։

Ի՞նչ էի ասում։ Պետերբուրխեմէն մինչկի Թէյրան քանի օրւան ճամփա կուլի հ՞ը։ Եարար գիդենամ հիմի Ղզլբաշի շահ Մամէդ-Ալին, խիլքի է էկի, թէ չէ, էս գործը պիտինք անձնի Աստրպետին. թող մի քիչ դումիտ անի շահի համա։

Հա, էն էի ասում։ Էչմիաձին, վուր գնացի, ձիր հոքուն մեռնիմ, գիդի՞ք թէ ընչիր տեհայ, ձիր ու ասկի խաթրու քանի ջէր Վանքի մուքթա խորանուցը գնացի, քանի ջէր ասկի կինացը խմեցի. մէ մէ ախմախ կի ասում է՝ Գասպարն ու հաջի Ամբարցումը ասկը չին սիրում, կօսէ. է, միք խօսեցնի է, իս իմ վրէն վուր չը խօսիմ, վուր չասիք թէ իրա գլուխը գովում է, հոքի ունիմ տալու, Ամբարցումի համա կի պիտիմ սաի, վուր ասկի համա մեռած չէ, Գարեգին Խաժակը խօ, ասկ վուր չկի. մէ սահաթ չի ապրի ու թող չապրին մէ նմուռ, ով վուր մուխանաթութին դուզին միր մինձ ու խիղճ ասկին։

Աստուձ կինք տայ Մուրադբէգովենց վարժապետին, գիդի՞ք թէ ինչ հոքեւէր մարթ է. իմացաւ թէ չէ, վուր քաղկեմէն էկիլ ինք միր ջառ ու ջարամաթով, էնչախնէէթ հրամանք արից, լճի կուխկին, վերի օթախներումը տիղ տալ ուխց։ Մինչկի դեդինքը շնուրհակալ ինք. լաւ էր վուր Վանքումը տիղ չըռւին, թէ չէ բանը բուրթ կուլէր, էնչախնէէթ տիրացու կու դառնայինք, վունց վուր էն մէկէնիրը՝ դոխտուրնիրը թէ ինջինէրնիրը, ըէդախտուրնիրը թէ ատւակատնիրը ու հաուց Աստուձապաշտ խալխը։

Վուր ասիմ, պիտիք ասի՝ ասում է, վուր չասիմ, պիտիք ասի, չէ ասում. հիմի իս վո՞ւնց անիմ. վուր համ ասիմ համ չասիմ—էն ամեն բանի համա ինչ վուր տեհիլ իմ, ինչ վուր քաշիլ իմ։

Ասիմ չասիմ, դիփ էլ մէ հեսաբ է. մէ բան, վուր էրկու անգաձ ունիք, մէկով իմանում իք, մէկէլով դուս թողնում։

Էչմիաձինը ի՞նչ է գիդի՞ք... հալբաթտա կու գիգենաք, բաս խօ ախմախնիր չիք միր ցօցիալներու հանգը, վուր չիմանաք թէ Էչմիաձինը ինչ է։

Էչմիաձինը միր ասկի խաօրիէն է։

Էչմիաձինը վունց վուր մարթու մաջէն (գարկերակը) էնենց մէ բան է։

Էն՝ ինչ վուր ասում էին, էն՝ ինչ վուր խօսում էին, էն՝ ինչ վուր դաս էին տալի՝ սուտ է։

Ու էն էլ կի դուրթ է, վուր մարթս թէ մէ շափաթ, աւել պակաս ասիմ, իրիք օր, իրիք գիշիր մնում է Էչմիածնի հայաթում—գալատնում, հէսաբիկ է խասիաթը փոխում, հէսաբ սիրտը խառնաշփոթ է ըլում, կօսիս ջաղաբաղ Կէկէլն ու կուզիան Բեթեանը ըլին։

Էչմիաձինը դաւի ու դառաբի, ինտրինգ մինարինգի բառաձն է, ամբարը։

Իս խօ հայ քրիստոնեայ իմ, հէրս էլ հայ քրիստոնեայ էր, դէդէս էլ ու մամիդէս էլ, պապս էլ ու տատս էլ, մի խուսկով մինք էն գլխեմէն, ջէր իփ վուր Աստուձն էլ չէր էկի միր Հայաստանումը, մինք հայիր էինք, ու ասկի համա ու հաւտի խաթրու գլխնիրս ջիդ դրած։

Մաշ։

Դուք հենց գիդիք էնենց իմ սիրում իս հաուց ասկը, վունց վուր միր փողրաչիկ ասկի փրզիչնիրը ու անաքանդ գուրձիչնիրը, վուր ասկի խաթրի համա, ասկն էլ ին քանդում մասկրն էլ, ժամն էլ ու պատարագն էլ, շկօլն էլ, ճեմարանն էլ, սեմանարիէն էլ, գազէթնիրն էլ, կօնցիատուրն էլ, սինօդն էլ, Էչմիաձինն էլ, Վեհարանն էլ, գիղն էլ քաղաքն էլ, գիդացուն էլ բաղկցուն էլ—հա, դուք հենց գիդիք թէ, իս էտպէս իմ սիրում ասկ՚ըս. վա՞յ մէ, վայ մէ, օրական չուրս ջէր ասկի կինացն իմ խըմում, խանդխաան էլ՝ թէ վուր կա, խէթուն լաւն է ըլում, հինգ վից ջէր էլ ատկաղ չիմ անում, դուք կի հենց գիդիք, թէ իս ձիդ պէս էրեսանց իմ, իս՝ ու մինք էլ անով, տիզով որանիրս նեքսեանց ունինք։

Հա՛, էն էի ասում, Էչմիաձինը հաւսիրան է, ու վունց վուր սիրտը մարթու համա հարգաւուր է, էնենց էլ Էչմիաձինը ասկի համա, ու վունց վուր սիրտը լաւ բանիր էլ գիդէ, բորոտ բանիր էլ, էնենց էլ Էչմիաձինը. էստի ինչ ասիմ, իս խօ ձիգ հիմի անատամի դասիր չը պըտի տամ։

Էչմիաձինը հայու՝ սիրան է, Օսմանլի հուզում թողած Հայաստանն էլ փուրն է, ինչ տաս՝ կու մարսի, Թիփլիզն ու Բաքուն էլ ձեռքիրն ին, Նախչեւան, Հաշտարխանն էլ աչքիրը, Արմաւիրն էլ՝ Կաւկասով ու Եկատերինադարով քինթն ու իրա ծակիրը, Մոսկովը ճակատը ու Պետերբուրխն էլ խուճուճ մազիրը, վուտնիրը կի Ստամբօլն ու Երուսաղէմի պատրիարքարաննիրը։

Իս բան իմ ասում, հասկացէք էլի, տօ բեդասլնիր, հիմի դուք ուզում իք, վուր համ անատոմիա. համ էլ գիօգրաֆիա, համ պօլիտիկա, համ էլ ասկասիրութին սովրեցնիմ ձի՞զ։

Այ թէ մուքթա խորոմնիր իք հա՛, տօ դուք միր քսուտ վարժապետներուն, վուր իսկի էրկու իշի գարի չին կանում փայ անի, լաւ լաւ հարուր թումնեռով ռոճիկնիր իք բաժնում, ու ինձ կի ի՞նչ իք տալի։

Ասում իք, «Աստուձ ունինք» կօսէ, բա վուր Աստուձ ունենա՞ք. էսենց բանիր կուլի՞ աշխրքիս էրեսին, արեգակի տակի՞ն, Էչմիածնի ու սինօդի կուխկի՞ն։

(Էլի կուլի)

Գասպար Կալաթազեանց

## ՁԱՓԱՀԱՍ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

—Հայկանուշ ջան, երէկ մեզ մօտ էլչի էր եկել քեզ համար Ծլաղ Թէչօի կողմից։

—Ախ, մայրիկ բաւական է…

—Աղջի, ախ վախ քաշելը ինչ ա. ծամ կտրած, էլ նազ անելը ինչ ա.

—Բա ինչ անեմ, նա յիսուն տարեկանէ խօ է…

—Հէնց նա լաւ է, որ ջէէլ ջհալի թայ չէ, գեղի աղտախկալ է.

—Չէ, չէ, մայրիկ ջան, ես նրան չեմ գնայ, որ չեմ գնայ։

—Վա՜յ, վա՜յ, աղջի սրտամեռ, քո հէրը նրանից հալա երկու տարով մեծ է, ինչ անեմ, հօրդ տանից հանեմ, վռնդեմ։

—Վա՜յ մայրիկ ջան, հայրիկիս տանից մի վռնդիլ, Ծլաղ Թէչօին կը գնամ, Թէկուզ երկու տարով էլ հօրիցս մեծ լինի։

Մակինսկի

## Արդար դատաստան

Գիքին ու Ակոփը կռուել էին և իրար քիթ ու պռունգ ջարդել: Երկուսն էլ գանգատւում են գիւղի դատարանին:

Մինչև դատի կանչելը, Գիքին տեսնում է սուդիա Թէչօին և գինետանը մի լաւ խմացնելուց յետոյ խնդրում, որ դատի օրը իր կողմը խօսի:

—Բաշուստա, Գիքի ջան, քու էս պատիւդ ես ճնց կմոռանամ, ասում է ու գինու բաժակը դարդակում սուդիա Թէչօն:

Ակոփը Գիքնից յետ չի մնում, նա էլ է խմացնում, պատիւ տալիս Թէչօին ու խընդրում, որ իրան կողմը խօսի:

—Բաշուստա Ակոփ ջան, քու աղուհացդ ես մտէս չեմ ձգիլ, ասում է մեր սուդիա Թէչօն:

Դատի ժամանակ դատաւորներից իւրաքանչիւրը իւր կարծիքն է յայտնում, իսկ Թէչօն ամբողջ ժամանակ լուռ է մնում և ոչինչ չի ասում:

—Բա՞ չես դու էլ քու գիտեցածն ասում, վերջապէս դիմում են Թէչօին միւս դատաւորները:

—Ախպէր, ինչ ասեմ, երկուսն էլ դուզ են, դրանցից մէկն էլ ա մեղաւոր չի, պատասխանում է բողազն խառակելով սուդիա Թէչօն:

—

—Ուսանող.—Համալսարանը որ աւարտեմ ու գործ չճարեմ, ինչով պարապեմ:

—Հայր.—Վարժապետութեամբ կամ գրականութեամբ:

Ուսանող.—Իսկ որքան փող է հարկաւոր այդ պաշտօնները ստանալու համար:

Հայր.—Վարժապետութեան համար՝ ոչինչ, իսկ գրականութեան համար բեխերը ածիլելու փող՝ մի աբասի:

—

—Բարև, Սարգիս.

—Ձեռքերս եղտ է, չեմ կարող բարևել:

—Ինչու է եղտոտել

—Եղբայր, ինչ անեմ, վարժապետութիւնից ձեռք վերցրի ու հիմա դատարութիւն եմ անում:

Վարժապետ

## ԱՄԵՆՔՍ ԷԼ

(Չեռնաւոք)

Ես եմ որ կամ, ինձ լսեցէք,
Ականջներդ լաւ բաց արէք.
Աշխարհն ամբողջ պորտիս վերայ
Պտտւում է մինչև հիմայ:
Ազգի գլխից մազ չի ընկնում,
Ողջ աշխարհում մի բան լինում,
Որին խառըն ես չլինեմ,
Որին մատով դիպած չլնեմ:
Դպրոց բացեց մի խուլ գեղում,
Կամուրջ շինեց առւի վերայ,
Ցեպպելինը վեր բարձրացաւ,
Թէ գահից ցած շահը իջաւ.
Ես ասել եմ, ես խօսել եմ,
Դրանց մասին ես գրել եմ.
Ես եմ. ես եմ... ամբողջ աշխարհն
Առանց ինձի մութ է, խաւար
Դրագէտ եմ, բանաստեղծ եմ,
Լրագրող, մեծ փիլիսոփա.
Քաղաքագէտ, գիտնական եմ
Օրէնքները գիտեմ բերան:
Ես եմ միակ մարդը ազնիւ.
Ուրիշները գող, աւազակ.
Ազգի փողերն առանց հաշիւ
Կերան՝ թողին կասսան դատարկ
Ես եմ այլֆան ու օմեգան,
Ինձնից դատ մարդ մի որոնիլ:
Ես եմ միայն, ես քու պաշտպան
Ես եմ կուռքդ, սոսկ ինձ պաշտիր:

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

### ԳՕՐԻՍԻՑ

22 սեպտ.

Վերջերս մենք կատարեալ ժողովածակ եղանք և վերջը հազիւ հազ կարողացանք մեր ծխական դպրոցը բաց անել: Ուսուցչական խումբը կազմ ու պատրաստ է, պահպանողական, լիբերալ, կղերական, ռամկավար, դաշնակցական, ու կան—ական և ժամանակի ոգու ամեն մի թեւադրութեան յարմարւող անձնաւորութիւններից:

Այդպէս էլ հարկաւոր է. դպրոցն էլ բաւական ապահով հիմքերի վրայ է դրուած. վերացրած է տուրքը, նուէրները և ամեն մի կողմնակի եկամտի աղբիւր. հոգաբարձուներին իրաւունք է տուած միմիայն պահել դպրոցը ..

Աստուած հոգեբարձուներին ուժ և կարողութիւն տայ:

Վարժապետների բաղդից էլ սուգը փոխւում է, լիառեր հանելը բաւական կրձգձգուի:

Fis

### ԱԶՏԱՐԱԿԻՑ

24 սեպտ.

Քաւոր Փապպար!

Էս հօգոստոսի 31-ին դուս էկայ քուչաքուչումը առեցին, թէ բսօր Գարատակոյըմը приемный экзаменъ ա, համ էլ իրաւունք կայ, ուրիշ մարդ էթայ լսի: Դուզ գնացի գարատակոյը տեհայ սկսել են: Դուռը բաց արի, մի հատ վինաւստ առեցի ու նստեցի:

Էգզամեն տւողները օխտը փոքի են, բոմէքն էլ ծխականի աշակերտ, բանցըր դասարաններից—4-դի, 5-դի և 6-դի: Ուզում

### ՖԵԼԻԵՏՕ՞Ն

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԳՈՐԾԱԿԱԼԸ
ԵՒ
«ԿԱՎՌՕՇ» ՈՒ «ԿԻԿՕ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ
ԵՐՒԱՆԴ ԹՈԼԱՅԵԱՆԸ
Ա ԳՈՐԾՈՂՈՒԹ
ՓՕԼՍՈՒՄ.

*Անցքը պատահում է Պերայի մի փողոցում, յետոյ անցնում է ընտօրան:*

—Թոլայեան.—Էֆենդիմ, էֆենդիմ, բարի էք եկեր, ինչպէս է առողջութիւնիդ ջանըմ քեզի ճրանից եմ տեսեր. պատուարժան Նշան աղայի եղբօր որդիին հարսի—թոռան զոքանչի թաղման սեղանին կարծեմ տեսնուեր ենք. ինչ աղուոր սեղան էր, ես շատ, անչափ կը սիրեմ սանկ սեղանները, սանկ մեռելահացերը. կարծիքի եմ, թէ էն ամենէն աւելի պիտի հոգալ և մարմնոյն և հոգոյն հանգստութեան, սանկ է եղբայր սանկ, եթէ ազգային մը, գործիչ մը, ես ա՛ռաւել ազգային խմբագիր մը աղուոր չուտէ, չըմպէ, և երբեմնակի ալ յօգուտ ազգի առաջադիմութեան, եկեղեցիի փրկութեան և ազգին ալ սիրոյն, մատրիկ չը ոնկէ նէ, անիկա բան մը չի կրնայ ընել և ոչ միայն այս, այլև ըրածն ալ եթէ չսեմ գէշ, գէթ արդիւնաբեր ալ չըպիտի ըլլայ. հաւկնաւոր բառնիս, էֆենդիմ, սիրեմ զքեզ, կը յիշես թէ ինչ աղուոր սեղան մը էր:

—Մանուէլեան,—Ոչ պարոն. ես չեմ յիշում, ես կեանքումս մեռելասեղան չեմ գնացել, այդ բանը մեր կուսակցական և տակտիքական գործունէութեանց մէջ, ի բաց է առնուած:

—Թոլայեան. Ջանըմ, ինչ խև խև կը դրուցես, կրնա՞յ ըլլալ որ սանկ աղուոր սովորութիւնները, սանկ ազգային աւանդութիւններ և կանոնները, թաքթիքական գործունէութիւնները մերժեն և իրաց ընեն: Ազգին տէնը կուզեն քանդել ինչ է՝ ատ յիմարագլուխ կուսակցութիւնները: Քեզի սիրեմ, մանենք նէ սա ճաշարանը, հոն աղուոր խորտիկներ շատ համով կը պատրաստեն,—հոս մենք...

Մանուէլեան.—Ոչ, ես չեմ կարող, դեռևս տասւօտեան ութ ժամը չկայ. ինչպէս կարող եմ ես նախաճաշել, կամ ճաշել:

Թոլայեան.—Ջանըմ ինչ կսես, սիրեմ զքեզ, ինքս կը հիւրասիրեմ. կուզեմ զքեզ պատուել: Ան սահմանադրութեան հրատարակուելէն ասդին, քանի քանի ազգայնոց պատուեր եմ, ես սանկ բնոյթ մը ունիմ, կը սիրեմ ազգայնոցս պատւոյն համար անձս իսկ զոհել. կը խնդրեմ, կաղաչեմ, պաղատելով կը հայցեմ:

Մանուէլեան.—Չէ, չեմ կարող, շնորհակալ եմ, ես սովոր չեմ, դա ինձ նոյնիսկ կը վնասի, անժամանակ ինչպէս կարելի է ուտել:

Թոլայեան.—Ան պատւոյս կըդի պչէք, եթէ չը գաք ու մերժէք զիս. կրնա՞յ ըլլալ աւելի վիրաւորական ազգի գործչի կամ խմբագրի մը համար, երբ ազգային մը՝ և այն ալ ձեզ պէս շնորհալի, ազգասէր, սօսիալական տաղանդ մը, մերժելու ըլլայ խնդիրս. ահ, այլևս պատասխանատու դուք պիտի ըլլաք, եթէ դա պարագայէն ինձի, առողջութեանս վնաս, սրտի պայթիւն, կամ կաթւած մը իջնէ վրաս. ես սանկ բնոյթ ունիմ, ինձի նայէ, ես ազգայնոցս համար ամեն ինչ պատրաստ եմ ընել, դուն համրէ թէ բատ ձեր՝ ճաշուժամ է. մանենք ուտենք և զրուցենք ու տեսնենք, թէ ինչ պատուաւոր խնդիրներ

են ունթունեին գարատակոյի III բաժանւումը։ Իսպեխտուրը Սմպատովին ասեց, ДИКТОВКА տամ թող գրեն. նա էլ ասեց, գրեցին. Աստծո գրիլ համարի. օխտը ջէրկը բան գրեցին, յամէքը երսուն սխալ թողին։

Ցետով ուստնի էգզամինը սկսեց. ընենց էգզամին ուրին, ընենց ռըսէրէն խօսըմ են, որ կարալ չեմ ընենց գրիլ՝ որ լաւ հասկանաս. ինչ գլուխըդ ցաւացնեմ, ռնցոր շունը թազա մմած պոլի վրին սսկոռ կածի։

Վերջը դաս չի դուս էկաւ, մինն էլ ա ունթունեցին ոչ։ Իսպեխտուրը ասըմ ա, դուք կիմանաք, էս փիս աշակերտներքցն են, թէ ինչ ա, որ կարեցան ոչ. ասեցինք, չէ ըտտնք ընդադի լաւ թէւանշանն են ստացել, յիրանցով դառաւ են էլել, ընդուր են էկել էգզամեն տալու։ Էտ ա որ, հայոց շկօլ ա ռսերէնը բիչ են սարւացնըմ. տամա, ախպէր, թո քիչ սարւացնեն, լաւ սարւացնեն. ախար ըտտւնք սկի դադ չի գիդան յէ՞։

Ցեղով էդ աշակերտներին հարցնըմ ա, թէ բա ձեր վարժապտերը ինչ բանի են, ձեզ ռնց են դաս տալի։ Էլ լալացան, ասեցին ոչ, թէ մեր վարժապտերը ճփ են կուխց դադարել, որ մեզ դաս տան, համ էլ յիրանք էլ չի ընդար լաւ գիդան, որ լաւ դաս տան։

Հիմի որ ասեմ, պտի ասեն՝ անքաղաքավարի գեղըցի ա, տուր ընդուր բիարուա ընըմ։

Տօ բա ամօթ չի՞ էն վարժապտի համար, որ կարըմ չի դաս տայ, մընըմա դասարան, փոխանակ առաչ տանելու, տալիս են գօդալ ընդունակ էրէխերնցը բթամտացնըմ։

Սանահէր Ցարուծ

---

ԲԱԼԱԽԱՆԻՑ

23 սեպտ.

Լուսաթաթախ եւ ազգի պարծանք Գ. Կալատուզեանց

Կարդալով «Խաթաբալայի» № 35-ը, որում քու արդար ձեռքովդ տպել էիր ուել «Մ՚էկէլ Թազայ տարուն աշխրքի վիրջն է». անսահման տխրեցի, հաւատացնում եմ քեզ, որ եթէ կինս ասէր, (չնայած որ մի ամիս է ինչ պսակւած ենք) «Այլեւս քեզ հետ չեմ կարողանում ապրել», այնքան ցաւ չէր պատճառի, ինչ որ այդ լուրը պատճառեց.

Պատճառեց ոչ թէ նրա համար, որ մի քանի ամսից յետոյ աշխարհիս վերջն է լինելու, այլ նրա համար, որ ուրեմն նորից երկարուձիգ մի քանի ամիս պիտի գոյութիւն ունենայ այս նզովեալ աշխարհը. բայց մի գուցէ մինչեւ այդ երանելի օրը ես չապրեցի ու աչքովս չտեսայ աշխարհի վերջը։

Աստուածանից ուրիշ բան չեմ խնդրում, այլ Սիմէօն ծերունու նման միմիայն մի բան,—այնքան կեանք տայ, որ էդ օրը, աշխարհի վերջը տեսնէի, ու այնպէս աչքերս փակէի։

Մեծն Գասպար, Աստուածանից կեանք եմ խնդրում, որ մինչեւ աշխարհիս վերջը ապրեմ. քեզանից էլ մի բան եմ խնդրում, որ չլինի թէ, սխալւես, առաջի անգամի պէս, պաշտպան կանգնես ու չրթողնես, որ աշխարհը կործանւի, միենոյն է քո արժանիքը չեն գիտենալու, դեռես բամբասելու են, թէ իբրա շահերից դրդւած է վեր կենում պաշտպանում. արժէ՞, էն էլ հիմիկւայ խալխի համար գլուխ ցաւացնե՞լ։

Մ՚ոնսի

---

ՆԻԷՐ ԳՕՐԻՄԵՑԻՆԵՐԻՆ

Ուրիշ տեղեր էլ կարող են օգտուել

(Նրգել Թիֆլիսեցոց «բարո՜վ, պարոն Մինաս»ի եղանակով.)

Բարով պարուն Մանաս,
Ո՞ւր էտենց կու շտապի՛ս.
Թէ վուր ժողովք գնաս,
Քու փուշման յիդ գո՛ւքաս։

Ժողով վուր կանչւում ին,
Միր ծխականներուն.
Էնչախննէթ ծլկւում ին,
Մկան ծակիրը մտնում։

Թէ հոքաբարցու իս,
Հաուց շկօլեքում.
Փուղիրը ջալդ հաւաքի,
Հագիր ունեցի ջբում։

Մէ բաշ վարժապետնիրը,
Քիզմէն ջամագիր գուզին.
Մինչկլի տուրք ժողովիլդ,
Սուդից լիստ դուս կու բերին։

Շկօլէք, գրադարան,
Ցաճախուրթնիր կունենան.
Իփ վուր փուխւին ու դառնան,
Բեկլիարդնի ան միկխտան։

Վուր կուռը մտիկ տաս,
Աչկիրք ին լղտած.
Տղիրքը լօթի - փօթի,
Աւարայ ին, դուս ննգած.

Ես իմ կատլետնիրով
Ձիր պակսան իմ ասում.
Դուք կի ձիր հիշտ ծիծաղով
Տուստուց բանիր իք անում։

Զուռնաչի

---

կան սա ժամուս հրապարակին...

Մ՚անուէլեան.—Ի՞նչի չէ, եթէ այդպէս է՝ կարելի է, բացի այդ, այն փողը, որ «Խաթաբալայի» խմբագրութեան դուք պիտի տաք... ձեր նամակները, հաշիւները մօտս են, աւելի լաւ է հիմաեեթ վերջացնենք։

Թ՚ոլայեան.—Կը սիրեմ, կը գովեմ սանկ ուղեղները և գործ և փող. ջանըմ, կսեմ թէ հայերս խելօք ազգ ենք, ազգային գործերը ժամանակին եթէ տեսնելու, քննելու և դատելու ու կարգադրելու ըլան... (մտնում են բէստօրան) Հոս նստինք, հոսէն ամեն բան աղուոր կերևնայ, նաև գեղանի կօյսեր կը շրջին, սա սեղանին վրայ համով կերակուրներ կը բերեն. ազգային գործերու մասին հոս լաւ կրնանք խորհիլ... ան ատեն այլեւ մենք հոգս և ցաւ չպիտի ունենայինք։ Խնդրեմ նստէք, պատրիարքարանը առատաւեն պիտի գիտնայ... դուք ինչ կը անկէք, մաստի՞կ թէ րախի... է՛, մերդ, գարսօն, եկուր հոս, ինձի նայէ— պատրիարքարանը առատաւելն պիտի գիտ... մաստիկ և քոնեակին էն աղուոր ու թանգ տեսակը կը խնդրեմ, հրամցուր մեզի, դուք ռուսաբացիքդ ալ ունէ՞ք սանկ աղուոր ճաշարաններ, պատրիարքարան ալ ունի՞ք։

Մ՚անուէլեան.—Ոչ, պատրիարքարան չունինք, բայց ճաշարաններ շատ ունինք. իսկ առհասարակ սովորութիւն է մեզ համար տանը ճաշել, ընտանիքի մէջ։

Թ՚ոլայեան.—Ջանըմ ինչ կը գրուցես, կրնա՞յ ըլալ, որ ազգային գործիչները տանը ճաշեն, ան ատենօք, երբ ես խմբագիր և անօրէն եղած եմ, տանս երեսն անգամ չեմ նայեր։

Մ՚անուէլեան.—Իսկ ձեր հաշիւները, կարելի՞ է հիմայ նայէք։

Թ՚ոլայեան.—Անմիջապէս, անմիջապէս, կը սիրեմ ես հաշիւներ նայել, երբ քիչ մը աղուոր տրամադրութեան մէջ եմ. պատրիարքարանը, թէ ազգային ժողովը... գարսօն, շուտ ըրէ ջանըմ, մեզի սպանեցիր սպասցնելով. ժողովը սա պարագաներուն եթէ գործելու ըլլայ, ազգին գործերը սանկ չեն ըլլար. Երուսաղէմին հարցը անանկ հարց է, ինձի նայէ. ջանըմ գարսօն, ան ապուրը, ան խորովածը, պատպատակին շօքոլաթին տեսակը, վարունգը, տապակած ձուկը, հնդուհաւին տուտուղը սխտորով. անգլիական բիֆշտէքսը, սուլթանական դահեայ մը, քաքաւօ կը ըմպէ՞ք բարեկամ, թող անուշ ըրէ, Ռաֆայել գինին աւել համով և անուշ է, դուք անուշ ըրէք, մենք պօլսեցիս սանկ կը սիրենք մեր հիւրերը, մեր ազգայինները։

Մ՚անուէլեան.—Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, Աստուած կեանք տայ ձեզ, շատ բանով մենք ձեզանից պատուած ենք։

Թ՚ոլայեան.—Անանկ է եղբայր, անանկ է, անկէ մաստիկ մը, շատ անոյշ է. վարունգը Սալօնիքէ բերւած է, ասոնց ջրեր է մեր նախկին վեհապետը, Սուլթան Աբտուլ-Համիտը, հիմի ան Սալօնիկին մէջ պարտիզպանութիւն կ՚ընէ. հէ՜յ գարսօն, ան թռչուններէն առ նէ, որ մեր սուլթանը կը մեծըրնէր. անանկ է, ինձի նայէ՛, մենք առաւել կը սիրենք մեր ռուսահայ եղբայրները։

Մ՚անուէլեան.—Շնորհակալ եմ, եղբայր, ես չեմ կարող մի պատառ իսկ ուտել, ես աւելի հաշիւների համար...,

Թ՚ոլայեան.—Ես նոյնպէս հաշիւներուն համար հոս աճապարեցի, քոնեակ անկէ խնդրեմ, շատ անուշ է։

Մ՚անուէլեան.—Կարելի է և ուտել և հաշիւները տեսնել։

Թ՚ոլայեան.—Ի՞նչ կը հրամայէք, առ կարող է փչանալ մարդուս առողջութեան. Տաղաւարեան էֆէնդիին կը ճանչնա՞ք, ան

# ԵՐԿՊԱՏԿԵՐՆԵՐ

*Եթէ համեմատելու լինենք առաջուան եւ ներկայ կեանքը, նկատելու ենք հետեւեալ հակապատկերը.—*

## *Դպրոցում*

—Սիրելի մանուկներ, ինչ էք կարդում։
*Առաջ.*—Պռօշեանի, Աղայեանի, Շիրւանզադէի, Րաֆֆիի, Ահարոնեանի համով հոտով գրուած հեղինակութիւնները։
*Այժմ.*—Ներեցէք, նախ մենք մանուկներ չենք, այլ պարոններ և երկրորդ կարդում ենք Սանին, Պինկերտոն, Շերլոկ —Հօլմս և այլն։

—

—Մի ձեռքով երկու ձմերուկ կարող ես բռնել.
*Առաջ.*—Ոչ, դա անկարելի է.
*Այժմ.*—Թէ որ Ա. Երիցեանը միանգամից երկու թերթ կը խմբագրի, ես երկու ձմերուկ չեմ կարող բռնել։

—

## *Գրականութեան մէջ*

*Առաջ.*—Պռօշեան, Պալասանեան, այս ձեր.
—Րաֆֆիի մօտ, այնտեղ լինելու են հեղինակներից մի քանիսը. Րաֆֆին խոստացել է կարդալ իր Կայծերի երկրորդ հատորը։
*Այժմ.* Երիտասարդ հեղինակը.—Երէկ գիշերուանից գլուխս տրաքում է, մինչև լոյս խմում էինք. հա, լսեցի՞ր, Լէժինը ինչ յիմարն է։
*Միւսը.*—Արի մտնենք գարեջրատուն, մի մի շիշ խմենք, ապա գնանք դատարան. մերոնք այսօր դատ ունեն մի ինչ որ յօդւածի առթիւ. դատից յետոյ էլ, առիթ կլինի մի քիչ կոնծելու։

—

## *Ընտանիքում*

*Առաջ.*—Ընտանիքի հայրը հարցնում էր աղախնուն.—
—Քոյրիկ, որտեղ է տիրուհին.
—Բոլոր ժամանակ խոհանոցում աշխատում՝ թթու էր դնում, իսկ այժմ երեխաներին է լողացնում։
*Այժմ.*—Ընտանիքի հայրը գգւելով աղախնուն.
—Սիրունիկս, որտեղ է հրէշը.
—Թամփում է, հէնց նոր վերադարձաւ տուն. ամբողջ գիշեր լօտօ էր խաղում։ Հաւանական է տարւել է, եկաւ շատ բարկացած, գլխարկը ընկած թէք, իսկ մազերը խճճւած։

—

*Առաջ.*—Այ տղայ, տետրակը ուտում ես. երկու օրը մի տետր ես բանեցնում.
—Ինչ անեմ, հայրիկ, դասագիրք չկայ. վարժապետի պատմածը գրում ենք, որ չմոռանանք։
*Այժմ.*—Այ տղայ, բա դու ինչի գրելու բան չունե՞ս, ինչի տետրակ չես առնում.
—Տետրակը ինչիս ա, այժմ ամեն առարկայից տասը դասագիրք կայ։

—

## *Ակմբանոցում*

*Առաջ.* Վերաս 500 ր. Թեաց, մինչև վաղը կսպասէ՞ք.
—Խնդրեմ, խնդրեմ, մեր մէջ այդ առթիւ մի՞թէ խօսք կարող է լինել։
*Այժմ.*—Զարմանալի մարդ ես, որ փող չունես ձեր ես խաղում, խաբեբայ.
—Խաբեբան ինքդ ես. կարծում ես չընկատեցի՞ ինչպէս սեղանից երկու ռուբլի տակովդ արիր, տեղը կեղծը դրիր։

—

## *Թատրոն*

*Առաջ.*—Շուտով ժամը 8-ը կը լինի, գնանք, թէ չէ ներկայացմանը կուշանանք.
*Այժմ.*—Տասներորդ ժամն է, մի՞թէ ժամանակը չէ սկսելու։

—

*Առաջ.*—10 տարի առաջ հայերէն մեթոդիկաներ չկային, ուսուցիչները օտարներից էին օգտւում և աւելի զարգացած էին.
*Այժմ.*—Մեթոդիկաներ շատ կան, օգուտ չկայ. ուսուցիչները տգէտ են։

—

*Առաջ.*— Տէրտէր ջան, Թաղմեկան (Թաղման վարձը) Յ-այ. կաշխատեմ, կը տամ. այժմ երեխաներս անօթի են։
—Ա՜ռ որդի. էս 5 մանէթն էլ, պէտք կը գայ, թաղմեկայի մասին մի էլ մտածիր։
*Այժմ.*—Ես ինչ անեմ, որ երեխաներդ անօթի են. թաղմելայիս տեղ, կարի մեռնող տուր, երբ թաղմելուս տաս. ես էլ կարի մեռնող կը տամ։
*Առաջ.*—Տէրտէր, այս ձեր.
—Ծխականիս մէկի աղջկան պիտի դըպրոց ընդունել տամ.
*Այժմ.*—Պետական դպրոցում հայոց լեզւի դասեր են աւելացրել, ուզում եմ խընդիրքս տալ, որ ինձ յանձնեն։

—

*Առաջ.*—Արշակ, ձեր ես գնում այդքան շտապով.
—Ասում են Ծատուրեանի խանութում գործակատարի տեղ կայ, գնում եմ փորձելու։
*Այժմ.*—Գնում եմ նահանգապետի մօտ, մի գրական, հասարակական քաղաքական թերթ հրատարակելու իրաւունք խընդրեմ։

—

## *Խմբագրատանը*

Խմբագիրը ասում է ցրւիչին—
*Առաջ.*—Մեր Թղթակից Աստուրին ձրի թերթ ուղարկէք, նա երբեմն աշխատակցում է.
*Այժմ.*—Ղուկասը թէև շաբաթական մի երկու լուրջ թղթակցութիւն ուղարկում է մեզ, բայց քանի որ բաժանորդագին չէ վճարել, թերթի առաքումը պէտք է դադարեցնել։

Ս. քահ. Տէր-Յովհ.

---

նոյնպէս կըսէ, թէ ուտելու, կերուխումին ժամանակ՝ մարդ հին հաշիւներ չը պիտի առնէ եղեր։

*Մանւէլեան.*—Հապա էլ ե՞րբ տանենք, ես վաղը պէտք է գնամ։

*Թոլայեան.*—Բարի ճանապարհ, ես ալ անանկ կը կարծեմ, թէ երթաք նէ շուտով, աղէկ կըլլայ, քանզի սա Ժէօն-Թուրքերը հիմիկ հայերուս շատ գէշ կը նային։

*Մանւէլեան.*—Ժէօն-Թուրքերը ինձ հետ ինչ գործ ունին։

*Թոլայեան.*—Ես ալ անանկ կը բացատրեմ, թէ գործ մը չունին, սակայն քաղաքագիտական և սօցիալական, ազգային ու ապակեդրոնացման հարցերը, նամանաւանդ Սաղիմեան հարցը, Վենետիկեան վարդապետի մը ֆրանսուհու հետ անհետանալը, Ադանային առաջնորդին փախուստը, Մուհամէդ V-ին Բրուսա ճանապարհորդիլը, Նորատունկեանին հրաժարականը, Պալիկեան էֆենդիին մահը, Ադանայի նոր կախաղանները, Վեհափառ Կաթողիկոսին օծումը, յունական արքայական տան գահից հրաժարելու խնդիրը, այլև Մամէդ Ալի շահին գաղթը Իրանի հողերէն, այնպէս կնճռոտեր է պետական և հասարակական միւս գործիչներուն հայեցակէտերը, և առաւել, եթէ ի նկատի պիտ առնենք, թէ ձեր՝ ռուսաստանցիներու նաւատորմին Բոսֆորէն անցնելու խնդիրը յարուցեր էք, ի դէպ Թիֆլիզի ազգայինները ինչպէս կը մտածեն, Հայաստանը շահ ձանի նէ, եթէ Բոսֆորէն Ռուսական նաւերու երթեւեկութիւնը բանալու թոյլատւութիւնը տանք։ Այժմս ձեր քով գինիին աղէկ տեսակը մրջած կընայ արժենալ, եթէ սանկ քանի մը նաւով, տակառներով բերել տալու ըլլանք նէ. էֆենդիմ. ես սանկ քիչիկ գործ մը ունիմ, կաճապարեմ հոն, դուք հոս ինձի սպասեցէք. վայրկենապէս պիտի գամ ձեզ պիտանի ըլլամ և կրցածիս չափ ծառայեմ. ես սանկ եմ եղբայր, ազգայիններս համար անձս պատրաստ եմ զոհել, պատրիարքին բարապանին պիտի հանդիպիմ, բարապան Մէլքոնին կնոջ տարփատու ուսեր եմ լսանալու, կուզեմ հանդիպիլ և անձիդ հետ սիգաճեմ երևնալ. Է՜, ցտեսութիւն, շուտով ես ծառայ կըլլամ. է, եղբայր երգիծաբանին գրութիւնն տաանկ է. չը գնամ չըլլար, հոս ալ չըդամ չի ըլլար. վասն զի ազգային էք. կրնաք ալ վշտանալ, ես, ես կարող եմ տանել ձեր վիշտը. ո՛չ երբէք։

Քանիցս ապտակներ վաստակեր եմ. քանիցս թուք ու մուր կերեր եմ, բայց ազգիս երբէք չեմ դաւաճաներ, վասն զի ազգայնոցս ես շատ ու անսահման սիրեր եմ, ինձի նայէ էֆենդիմ, գիտե՞ք ես եռուն սիրով կը սիրեմ ազգ և եկեղեցի, Հայաստա՜ն... սա բռնելուդ վրայ... ինձի նըրէ... ես վայրկենապէս պիտի հասնիմ։

*(Գնում է ու էլ յետ չի գալիս)*

Ապատկաւնի

## ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔ

Յով. Մալխասեանի «ՁԵՌԱԳԻՐ»-ը

—Աչքդ լոյս, պարոն Կարապետ։

—Շնորհակալ եմ, պարոն Հայրապետ, բայց ինչ է պատահել, որ ուրախ-ուրախ շնորհաւորում ես։

—Չե՞ս լսել, ձեռագիրը գտնուեց։

—Ի՞նչ ձեռագիր.

—Կորած ձեռագիրը

—Ո՞վ է կորցրել։

—Չգիտեմ ով, ինչ որ ձեռագիր էր կորցրել, գտնուել է. լրագրներում յայտարարեցին։

—Որ այդ ձեռագիրը չգտնուէր, ազգի տունը կը քանդուէր։

—Հապա ինչ կլնէր, աւելի լաւ էր ինքը գրողը կորչէր, քան այդ ձեռագիրը։

—Որ այդպէս է, ազգովի աչքերս լոյս, պարոն Կարապետ։

---

«Մշակի» № 207 ում կարդում ենք։ «Այսօր արդէն հրաժեշտ առնելով Վեհափառից՝ մեկնելու է Թիֆլիս Հ. Առաքելեանը։»

Այս տեղեկութեանը անպայման պիտի հաւատալ, որովհետև Հ. Առաքելեանը ինքն է գրել։

---

ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

—Ինչով բացատրել այն հանգամանքը, որ մեր նոր բժիշկները, Վեհափառի օծման օրերում, Էջմիածին էին հաւաքուել այնպիսի թւով, որպիսի թիւ չէր լինի և ոչ մի բժշկական համագումարում։

—Շատ պարզ, որովհետև Բագուցի հարուստներն էլ էին եկել, ուստի և սրանք էլ ամպարել էին, թէ տաճիկայ տարին արտասահման ճանապարհեն—կամ ինչ հարուստ աղջկայ հետ պսակուեն և կամ ակռաների պէս կարծել են թէ, այնտեղ լ և շ կայ, որից իրենք կօգտուեն։

---

## ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Արքունի թատրոնում բացւեց օպերային ներկայացումների սեզոնը, հրաւիրուած են հին և նոր երգիչներ Ռուսաստանի ամեն կողմերից-պակասում են միայն մեր սոխակները՝ հայ երգիչները, որոնք հայոց ազգը փրկելու և գեղարւեստականապէս զարգացնելու համար, Պետերբուրգի և Մոսկուայի եկեղեցիներում, տասնօրից երեկոյ «տէր ողորմեա» են կրկնում, իսկ Բագուի և այլ տեղերի դրամատէրերից էլ, փողեր են կորզում արտասահմանում երաժշտականօրէն կատարելագործուելու համար։

Շատ մխիթարական էր մեզ լսել Եւգէնի Օնէգին օպերայում Ղուկասով անունով Բագուցի հայ արտիստին, Լէնսկու դերում։ Որովհետև սրա մասին շարլօնական գովեստներ և ռեկլամներ չէինք լսել—ուստի և պարոնը խիստ լաւ ու ճաշակով երգեց, բեմի վերայ իրեն վայելուչ պահեց և որ գլխաւորն է, նոյն իսկ կօկիկ էլ մեռաւ մենամարտի տեսարանում։

Մենք միայն ցաւում ենք պ. Էյխենուալդի համար, որ Թիֆլիսում եղած մեր երգիչներից և խմբապետներից աչքը չէ հրաւիրել, սրանք աւելի էժան կվարձէին և գոռգոռալու համար աւելի յարմար էին։

Ի դէպ, ինչպէս լսում է, բայց չէ ճշտւում՝ տողերիս գրողը հաւաքական ուժերով մտադիր է մի նոր օպերա գրել և երգել այս սեզոնին «Աշըղբաշմինայլ» անունով.—նիւթը վերցրած է ազգային գործերից։

—

Արտիստիկ թատրոնում Մարգարիտ Փիթոյեանի առեւ դրամատիկական խումբը սկսել է իր ներկայացումները։ Խմբի մէջ են պ. Բարատով, Զինովև Վօլսկայեա և այլ դերասան-դերասանուհիներ։ Եթէ տիկին Փիթոյեան-Բէյբեցկայեան մեր հայ դերասաններից, կամ դրամատիկական ընկերութեան վարչութիւնից, Լեոն Բարայեանի նման շնորհալի ռէժիսոր և խմբի ղեկավար հրաւիրէր, անպայման մեծ գործ արած կը լինէր։

Բարատովին խորհուրդ ենք տալիս գնալ Հաւլաբարի Նոր դրամա և ժողովրդական թատրոնի հայկական ներկայացումներին, խաղի մէջ կատարելագործուելու համար։

—

Հաւլաբարի թատրոնում Սօս Խարազեան իր խմբով խաղաց Ուրիէլ-Ակօստա պիէսը։ Հաւլաբարցիներուն շատ դուր եկան Գուցկովի հերոսները. առհասարակ յար և նման պիէսները և Ակօստայի նման հերոսները մեզ դուր են գալիս, որովհետև կեանքի մէջ առհազին թւով Ակօստայի հետեւողներ ունենք—միայն ոչ գաղափարական՝ այլ գրպանական և ջիբազլատական

---

Ս. ՍՈՂՈՄՈՆԵԱՆԻ

ԼՈՒՍԱՏՊԱՐԱՆԸ

(Фото-Цинкографія)

ՏԵՂԱՓՈԽՒԵԼ է Պուշկինսկի փողոց, Պուշկինսկի Պասաժ։

## ՊՈՍՏ-ԱՐԿՂ

Թիֆլիզ. Լաչքարին.—Ձեր հերքումի հերքումը կը տպէի հետեւեալ համարում։

---

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

Լոյս տեսաւ

Ռ. Խան-Ազատ եւ Գ. Վարդանեան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

27 նկարներով և մի մեծ գունաւոր քարտէսով։

Դասընթացք ծխ. դպրոցների IV բաժանմունքի և ժողովրդական ընթերցանութեան համար։

ԳԻՆՆ Է 75 ԿՈՊ.

Գլխաւոր պահեստը «Գուտտենբերգ» գրավաճառանոցում. կարելի է դիմել և հեղինակներին՝—Тифлисъ. Сурпъ-Нишанское училище.

---

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

ՎԱՌՎ. ՍՄԲԱՏԵԱՆՑԻ

Պատրաստում են երկսեռ աշակերտներ բոլոր միջնակարգ (և Ներսիսեան, Յովնանեան, Գայիանեան) դպրոցներ ընդունելու։ Աւանդւում են նաև ֆրանսերէն, գերմաներէն. ձեռագործ (կերտուածք, զարդում և կողվազործութիւն) և մարմնամարզութիւն։ Ընտանիքիս մէջ միասին ապրելու կայ 2 աշակերտի տեղ։ Ընդունելութիւնը սկսուած է։

Սօլօլակ, փող. Պասկևիչի, № 13.

---

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Գրական, քաղաքական, հասարակական եւ առեւտրա-արդիւնաբերական անկուսակցական օրաթերթի

Առայժմ լոյս է տեսնում երկուշաբթի օրերը։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՄԻՆՉԵՒ ՅՈՒՆ. 1 Ր.

Հասցէն՝ Тифлисъ Редакція газеты «Сурандакъ»



# ОСЕНЬ-ЗИМА-СЕЗОНЪ
# 1909—1910 Г. Г.
# П. С. ДОРОЖНОВЪ

**Сололакская улица, домъ Гургенова. ТЕЛЕФОНЪ № 583.**

Для настоящаго сезона полученъ колосальный выборъ сезонныхъ новостей во всѣ специальныя отдѣленія причемъ помѣщеніе магазина значительно расширено: бывшее помѣщеніе Мириманова соединено въ одно.

Доводя до свѣдѣнія почтеннѣйшихъ г. г. покупателей, что фирма имѣетъ главную контору и складъ въ Москвѣ и постоянные магазины съ огромнымъ сбытомъ товаровъ въ городахъ: Тифлисѣ, Баку, Ташкентѣ, Астрахани и Уральскѣ, а по этому при колосальномъ оборотѣ дѣла имѣетъ, исключительно выгодныя условія отъ фабрикъ; заключая выгодныя сдѣлки при покупкѣ товара; вслѣдствіе чего цѣны на всѣ товары назначены ВНѢ ВСЯКОЙ КОНКУРЕНЦІИ;

### ВЪ ОТДѢЛѢ СУКОННЫХЪ ТОВАРОВЪ

Величайшій выборъ: трико для костюмовъ, драпъ для пальто, суконные товары для формъ всѣхъ вѣдомствъ и учениковъ.

### ВЪ ОТДѢЛѢ ШЕЛКОВЫХЪ И ШЕРСТЯНЫХЪ МАТЕРІЙ:

Богатый выборъ платьевъ въ заготовленномъ видѣ шелковыхъ и шерстяныхъ модныхъ матерій, очень прочныя шерстяныя матерій для форм ученицъ.

### ВЪ ОТДѢЛѢ БУМАЖН. ЦВѢТНЫХЪ ТКАНЕЙ:

Громадный выборъ бумазеи цвѣтной выработанной и начивной, байки и фланелету. Масса проч. всевозможныхъ цвѣтныхъ тканей.

### ВЪ ОТДѢЛѢ МЕБЕЛЬНЫХЪ МАТЕРІЙ:

Шикарный выборъ мебельныхъ матерій плюша, бахромы и прочихъ отдѣлокъ, портьеръ, шторъ, тюля гардиннаго, ковровъ, дорожекъ и проч.

### ВЪ ОТДѢЛѢ ПОЛОТЕНЪ И СТОЛОВАГО БѢЛЬЯ:

Полотно всѣхъ лучшихъ фабрикъ Россіи: специальныя бумажныя ткани для всевозможнаго бѣлья; столовое бѣлье лучшей выработки и новѣйшихъ рисунковъ: чайныя и кофейныя скатерти и одѣяла пикейныя.

### Въ отдѣлѣ готоваго бѣлья

Бѣлье дамское въ шикарномъ выборѣ из лучшихъ, очень прочныхъ матеріаловъ, фасоны по послѣднимъ парижскимъ моделямъ, юбки верхнія въ великолѣпномъ выборѣ.

### Полное приданое для невесть от 50 руб. до 10.000 рублей,

Бѣлье мужское, сорочки верхнія самыхъ новѣйшихъ рисунковъ изъ Заграничныхъ и Русскихъ матеріаловъ, бѣлье ночное изъ спеціалныхъ тканей замѣчательной прочности. P. S. на мужское, дамское и дѣтское бѣлье, по желанію принимаются заказы; пухъ въ подушкахъ.

### Въ отдѣлѣ трикотажныхъ издѣлій.

Чулки дамскіе и дѣтскіе, фильдикосовые, фильдеперсовые и нитяные высокаго качества: носки мужскіе и дѣтскіе всѣхъ размѣровъ, фуфайки кальсоны фельдикосовыя фельдеперсовыя и нительныя весьма прочныя; теплое трикотажное бѣлье профессора Егера и по его системѣ. Юбки вязанныя и трикатажныя пуховыя.

### ПЕРЧАТКИ МУЖСКІЯ И ДАМСКІЯ
### ЦѢНЫ ФАБРИЧНЫЯ И ВНѢ ВСЯКОЙ КОНКУРЕНЦІЙ

ПРИМѢЧАНІЕ: Всѣмъ иногороднимъ г. г. покупателямъ по первому требованію образцы товаровъ высылаются безплатно: При выпискѣ образцовъ слѣдуетъ указать какіе нужны товары и для чего.

*П. Дорожновъ*

Առաջնակարգ համարներ

# „ՎԻԿՏՕՐԻԱ“

Գտնւում է Թիֆլիզի կենդրոնում, Դւորցովայա փողոցի վրայ, փոխարքայի պալատի այգուն կից։

Համարները գեղեցիկ կերպով կահաւորւած, նորերս հիմնովին վերանորոգած և ամեն յարմարութիւններով։ Առաջինն անց[ն]ում է ելեքտրաքարշը։

Օրական վարձը 60 կ. մինչև 4 ր.։

Ամսով վարձողներին զիջումն։ Ընտանիքներին առանձնապէս տրւում են ամեն տեսակ յարմարութիւններ։

Ծառայողները վստահելի և քաղաքավարի են։ Սենեակներին կից կան տաք և սառը վաննաներ։ Ելեքտրական լուսաւորութիւն։

Հեռախօս № 1033

---

Ստ. Լիսիցեանի, Յովհ. Թումանեանի ու Լ. Շանթի

ԿԱԶՄԱԾ

# ԼՈՒՍԱԲԵՐ

Հայերէնի դասագիրք

Լոյս տեսան

Ա. տարի, երրորդ տիպ. 30 կ.

Բ. տարի, երկրորդ տիպ, բարեփոխ. 45 կ.

Երկուսն էլ ընդունւած կովկասեան շրջանի ուսումնարանական հոգաբարձուի կողմից, իբրև դասագիրք պետական դպրոցների համար։

Տպագրւում են.

Գ. տարի . . . . . 60 կոպ.

Դ. տարի . . . . . 75 կոպ.

Գլխաւոր պահեստներն են հետևեալ գրախանութները. Թիֆլիսում «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» և Կենտրոնական, Բաքւում Сотрудникъ, Երևանում Յովհաննիսեանի և Շուշում Բ. Տէր-Սահակեանի։

---

МАГАЗИНЪ

## Композиція

Тифлисъ Пушкинскій пассажъ № 8.



Громадная экономія

шведскаго композиціон. бѣля.

→Носится не менѣе двухъ лѣтъ!←

Постоянный большой выборъ свѣжаго товара

Воротниковъ, манишекъ и манжетъ.

Единственный представитель для Тифлиса и ихъ окрестностей

по фабричнымъ цѣнамъ

передѣлка въ любой фасонъ безплатно

М. А. КАЛТАГЯНЦА

---

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐ. ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՒՈՂ

## Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ

## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

Թիֆլիս, Միքայէլեան պր. №24 4.

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առեւտրական կրթութիւն.

Դասընթացքն աւարտողներին տրւում են ատեստատներ։

ԳՈՐԾՆԱԿԱՆ պրազմունքները կատարւում են կուրսերում Լօնդոնի Pitman. և Գաբիգի Pager դպրոցների ձևով կազմակերպւած Must r. Comptoir-ում։ Նիւթերն առնւում են ռէալ կեանքից. Առարկաններն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, խառը. գերմ. ֆրան., ամերիկական, բանկային և գործարանական. 2) Առևտրական թւաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն), 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թւաբանութիւն համրիչի վրայ, 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավառ ձեռքի ուսցում), բ) ոչ պարտադիր. 1) օտար լեզուներ, 2) արագրութիւն, 3) դակտիլօգրաֆիա (ռեմինգտօն և այլ.) և 4) առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարւում են և զատ զատ։ Խնդիրների ընդունելութիւնը 10—12 և 4—5 և կէս. ժ.։ Ծրագիրը և կանոններն ուղարկւում և տրւում են ձրիաբար կուրսերի շէնքում։

Խնդիրների ընդունելութիւնը օգոստոսի 20-ից. սեպտեմբերի 15-ից պարապմունքներ։

Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝

Տ. ՓԻԼՈՅԵԱՆ

---

## Ս. և Ա. ՂՈՒԿԱՍԵԱՆՆԵՐԻ



# ՁԿՆԱՎԱՃԱՌԻ ՄԱԳԱԶԻՆԸ

(Պուշկինեան փող. տուն Սունդուկեանի, վրաց սեմինարիայի դիմաց)

Ամէն օր ստացւում է սեփական ձկնարդիւնաբերանից թարմ ձուկ

ՍԵՒՐՈՒԳԱ, ՕՍԷՏՐԻՆ, ԹԱՐԹ

Ունինք մեծ քանակութեամբ թարթի դօշ. Դօնի և տեղական

բալիկ, ճիպա, ցալձվալա, եանի և այլ

ԸՆՏԻՐ ՏԵՍԱԿԻ ՁԿՆԿԻԹ (жидка) ԵՒ ԽԱՒԱՐ

Կովկասեան և արտասահմանեան ձկնային կանսերւներ

Գները ամենաչափաւոր

---

ԾԽԱԽՈՏԻ ԲՈԼՈՐ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՐԱՑ

### 60% ԵՒ ԱՒԵԼԻ 60%

ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ ԵՆ ԱՆՈՒՄ

և ծխախոտի թանգանալու պատճառով

**Ն. Ի. ԲՕՂԱՐՂԵԱՆՑ** և Որդ. գործ.

Իրեն նպատակն է դրել՝ պահել պահպանել առաջւայ պէս արտադրւող պապիրոսների բարձր յատկութիւնը և առանձին ուշադրութիւն դարձնել

| | | | |
|---|---|---|---|
| Симпатія № 8 | 10 հ. 6 կ. | Народныя Экономія | 10 հ. 4 կ. |

Գների այսպիսի աննշան բարձրացումով գործարանը հնարաւորութիւն ունի մշտապէս պահպանել արտադրւող պապիրոսների բարձր յատկութիւնն ու արժանաւորութիւնը, մինոյն ժամանակ աշխատելով ապագայում լաւացնել նրանց, որպէսզի արդարացնի և ամրացնի այն «ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆԸ», որով մեր ֆիրմայի պապիրոսները վայելում էին 50 տարւայ ընթացքում պ. պ. սպառողների կողմից։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Ներկայ յայտարարութիւնով (ոչ թէ ռեկլամ)

Ն. Ի. ԲՕՂԱՐՂԵԱՆՑ ԵՒ ՈՐԴ. գործարանը

ցանկանում է յարգելի հասարակութեան իրազեկ պահել գործերի ներկայ դրութեան վերաբերմամբ։ Ակցիզ. ստոր. մասին կանոնագրքի 940 յօդւածի հիման վրայ վերոյիշեալ պապիրոսները արգելւում են ծախել կոփկէտների վրայ նշանակած գներից թանգ։

ეროვნული ბიბლიოთეკა



ԱԶԳԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՁԻՐՔԵՐԸ
ՈՎ՝ ԻՆՉ Է ՏԱԼԻՍ.

## ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ



—Մուկուչ ի՞նչ կըսես, էս զահրումարի մէջ գոմէշներ, հա եզանը ծուր են։
—Մէչները կլնեն, հրա չէլած՝ խօ չեն կարող էդպէս եօրղա գնալ, վազել

## ՎԵՐՋԻՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ



ՏԵԽՆԻԿԱՆ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ· աէրօպլաններ և օդային նաւեր.

ՄԵԶԱՆՈՒՄ Գոռոտախօսութիւն՝ օդային ամրոցներ... սապոնէ բշտիկներ·